ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ

Մարտակերտցի արծիվը արյան կանչով մտավ ազատամարտիկների շարքերը, դարձավ նրանց ոգին ու հրամանատարը: Իշխանությունները չհասցրին պարգևներ տալ նրան, իսկ ժողովրդի համար նա հույս էր և հերոս: Վլադիմիրի ջոկատում կռվում էին առավել քաջերը: Նրանք չէին ծրխում: Արգելված էր ոգելից խմիչքը: Ամենափոքրիկ զանցանքի համար հեռացվում էին ջոկատից, որ հավասարազոր էր մահվան: Մարտիկները սիրում էին իրենց հրամանատարին, որի հետ անցել էին կրակների միջով: Կռվում էին ամբողջ Արցախում, մարտերից ազատ ժամերին օգնում սերմնացաններին ու հնձվորներին: Դա ստեղծարար ու մարտնչող բանակ է:

Հրամանատարի համար սուրբ էր մոր՝ Դարիկոյի պատվիրանը՝ վռնդել թշնամուն մեր հողից ու հաղթանակած տուն վերադառնալ, ուր սպասում են դեռատի կինն ու երեք ձագուկները: Միայն մեկ անգամ նա լրիվ չկատարեց մոր պատվիրանը. ջարդեց թշնամուն, բայց տուն չվերադարձավ: Հրամանատարին տուն բերին ազատամարտիկները:

Վլադիմիրի անունն Արցախում հայտնի դարձավ ազատագրական պայքարի առաջին օրերին, երբ կազմեց իր ջոկատը, գինեց ու կռիվ մղեց թուրքերի դեմ: Նրա ջոկատը մասնակցեց շատ գյուղերի պաշտպանությանը: Առավել հայտնի են խորհրդային բանակի կողմից հայաթափված Շահումյանի շրջանի գյուղերի ազատագրման մարտերը, որտեղ լրիվ դրսևորվեց երիտասարդ հրամանատարի մարտավարական տաղանդը: Հետո տղերքը շատ արագ հասան Կիչան, թուրքերից մաքրեցին մայրաքաղաք տանող ճանապարհը: Ամենահաս ջոկատի մարտիկներին հիշում են Թալիշում, Չափարում, Այգեստանում և այլ բնակավայրերում, որտեղ նրանք կռվել են: Այսօր այդ գյուղերի մի մասը գրավել ու վառել են թուրքերը: Ո՞ւր են Վլադիմիրի տղաները:

Նրա ջոկատի համար լուրջ քննություն էր Մարաղայի ազատագրումը ապրիլի 10-ին: Թուրքերը մտել էին գյուղ, ավերել այն, սպանել ու գերեվարել 100 մարդ: Տեղի ջոկատը անկանոն նահանջել էր: Վլադիմիրի ջոկատը փոթորկի նման վրա հասավ, և սկսվեց կատաղի մարտը: Տեղացիներն ուշքի եկան: Թշնամին փախուստի դիմեց, գյուղն ազատագրվեց:

Պաշարման մեջ եղած գյուղացիները գիտեին, որ երբ Վլադիմիրն է գալիս, հաղթանակն ապահովված է: Թուրքերը սարսափում էին նրա հետ դեմ առ դեմ հանդիպելուց: Վլադիմիրը շատ էր վշտանում տեսնելով ավերված գյուղերը, գյուղացիների տառապանքը, սակայն հորդորում էր նրանց՝ չհուսալքվել, դիմանալ փորձությանը, ամուր կանգնել սեփական հողի վրա, վերականգնել ավերվածը, հաց արտադրել: Ծերունիները հպարտանում էին նրանով, զարմանում, թե որտեղի՞ց է ուժ առնում այդ երիտասարդը, որտեղի՞ց է տարիքին անհամապատասխան նրա իմաստությունը: Իհարկե, մայր ժողովուրդն է այդ ամենի ակունք-աղբյուրը:

Պաշտամունք դարձած քաջ հրամանատարը զոհվեց 1992 թ. հունիսի 9-ին, Աղգեստանի (Զայլու) պաշտպանության համար մղված մարտում: Զոհվեց կրակի առաջին գծում, երբ վարում էր մարտը: Զինվորական կանոնակարգով հրամանատարը առաջին գծում չպետք է լինի: Սակայն Վլադիմիրը միշտ այնտեղ էր, ուր վճռվում էր ճակատամարտի ելքը, ուր կռվում էին նրա հավատի եղբայրները: Ազատամարտիկների աչքի առաջ, ինչպես կաղնին անտառում, ընկավ հայ քաջորդին: Եվ Արցախի հողն ավելի սրբացավ: Իսկ տասը օր անց զոհվեց նաև Լեոնիդը՝ նույն Թարթառ գետի հովտում՝ Տոնաշենում: Հավատի եղբայրների հոգիները գնացին երկնքում միանալու իրար:

«Վլադիմիրի ջոկատն է գալիս»՝ այս կանչը դեռ կլսեն Արցախում, քանի թուրքը վերջնականապես չի վռնդվել մեր սուրբ հողից: Պաշարման մեջ գտնվող գյուղերի բնակիչները հավատով են սպասում հայոց քաջերին: Ու կգան նրանք: Նրանց հետ կլինի Վլադիմիրի ոգին: Կգան նոր հրամանատարներ, կշահեն նոր մարտեր: Սակայն Արցախը միշտ կհիշի առաջին հրամանատարին: Խաղաղ պայմաններում նա կարող էր իր պապի նման հացագործ դառնալ կամ հոր նման՝ լրագրող, քեռու նման՝ բանաստեղծ: Բայց նա զենք վերցրեց, որ իր պապերի հողում հավերժ ապրի հայ երկրագործը և մշտապես հնչի հայոց բարբառը: Նրան հողին հանձնեցին իր ծննդավայր Աղաբեկաղինջ գյուղից Մարտակերտը բաժանող բարձունքի վրա, հոր կողքին, որտեղից տեսանելի են շրջանի բարեբեր դաշտերը: Նա այնտեղից կհսկի իր լեռնաշխարհի այսօրն ու ապագան:

Սեդրակ ՆԱՆԱԳՈՒԼՅԱՆ